

ՀԱՅ ԼՐԱԳՐՈՒԹՅԱՆ ԱՌԱՋԻՆ ՊԱՏՄԱԲԱՆՆԵՐԸ

Բաճառիչ. գիտ. քեկեաժու Մ. Ա. ԲԱՅԼՈՅԱՆ

Հայ լրագրության պատմության վերաբերյալ առանձին նյութերի առաջին անգամ մենք հանդիպում ենք սկսած անցյալ դարի 40-ական թթ., երբ աշխարհի տարբեր երկրներում լույս տեսած հայկական պարբերականների թիվը հազիվ էր հասնում երկուսուկես-երեք տասնյակի: Դրանք առավելապես նկարագրական բնույթի նյութեր են, պարունակում են տեղեկություններ առանձին լրագրերի կամ լրագրերի փոքր խմբերի մասին, որոնք կարևոր են, քանի որ հիմք էին դնում հետզհետե ավելացող պարբերականների գրանցման, ցուցակագրման գործին: Բայց ավելի ուշագրավ և արժեքավոր են այն հոդված-տեղեկությունները, հոդված-ցուցակները, որոնք աչքի են ընկնում պարբերականների մասին իրենց բնութագրումներով, հետաքրքիր ընդհանրացումներով, նրանց առանձնահատկությունների բացահայտմամբ: Այս վերջին նյութերից անդրանիկը պետք է համարել «Բաղմավեպի» 1847 թ. № 3-ում և 20-ում տպագրված անստորագիր հոդվածները, որոնք երկուսն էլ պատկանում են միևնույն հեղինակի գրչին¹:

Անժանոթ հեղինակը գոհունակությամբ է ընդգծում հայ հասարակական կյանքում և լուսավորության ու մշակույթի բնագավառներում նկատվող զգալի աշխուժացումը («Մեր ազգին մեջ ուսումնասիրության հոգվուն արթըննալը...»), որ արտահայտվում էր հրապարակ իջնող նոր գրքերի ու նոր պարբերականների անընդհատ աճով: Նախազգուշացնելով ընթերցողներին, որ գրքերի մասին իր խոսքը թողնում է ավելի պատեհ ժամանակի, նա անդրադառնում է նոր հրատարակված պարբերականներին:

Առաջին հոդվածում («Ազգային մատենագրություն. կրագիրք» խորագրի տակ) հեղինակը հիշատակում է «Դիտակ Բյուզանդյանից» հետո լույս տեսած հետևյալ հինգ լրագրերը. Զմյուռնիայի «Արշալույս Արարատյանն» ու «Հայրենասերը», Կալկաթայի «Ազգասերը», Թիֆլիսի «Կովկասը» և Կ. Պոլսի «Հայաստանը», սակայն ամենից ավելի կանգ է առնում «ամենեն նոր լրագրի»՝ «Հայաստանի» վրա:

Հիշյալ լրագրերի հիմնական արժանիքը հոդվածագիրը գտնում է նրանց հայրենասիրական ոգու («ազգասիրության») մեջ: «Ասոնք ամենքն ալ իրենց սեփական կատարելությունները ունենալեն զատ,— ասում է նա,— ընդհանուր ու ամենագովելի կատարելություն մը որ ունին՝ սա է որ ամենուն ալ հոգին ազգասիրություն է»²: Սակայն ավելի ուշագրավ են այն պահանջները, որ նա (անշուշտ և «Բաղմավեպի» խմբագրությունը) ներկայացնում է լրագրությանն առհասարակ, մի հանգամանք, որ ցույց է տալիս, թե արդեն այդ օրերին ինչպես էր արմատավորվում պարբերական մամուլը հայ կյանքում: Այդ մտքերը նա ավելի որոշակիորեն է դրսևորում, երբ խոսում է «Հայաս-

¹ Հեղինակի ով լինելը մեզ չհաջողվեց պարզել:

² «Բաղմավեպ», 1847, № 3, էջ 41:

տան» թերթի մասին, որն սկսել էր լույս տեսնել 1846-ի հուլիսից, նոր էր բուրրել իր առաջին կիսամյակը և իր նախորդների համեմատությամբ աչքի էր ընկնում ավելի կազմակերպված բնույթով, տպագրության համեմատաբար բարձր որակով: Այս հանգամանքը բավական լավ տպավորություն է թողել հոգևածի հեղինակի վրա: Նա գոհունակությամբ է արտահայտվում թերթի նյութերի ընտրության, նրանց բազմազանության, լեզվի հստակ պարզության մասին, չի մոռանում շեշտել և «լրագրին մաքուր տպագրությունը... տպագրողին ու բուն գրերն ալ փոքագրողին արդյունքը... որ մեր ազգին նաև օտարաց առջև պարծանք մը կալեցնե իր զարմանալի ճարտարությամբը»³:

Նրկրորդ հոգևածը, որ կրում է «Ազգային լրագիր» վերնագիրը, նվիրված է Վիեննայի «Եվրոպա» շաբաթաթերթին, կրկին «Արշալույս Արարատյանին», «Ազգասերին» ու «Հայաստանին» և մասամբ էլ՝ «Բազմավեպին», որտեղ նա հրապարակել է իր հոգևածները: Այս երկրորդն ավելի ընդարձակ է, հեղինակը կանգ է առնում յուրաքանչյուր օրգանի առանձնահատկությունների, հետապնդած նպատակների վրա, կապելով այդ ամենը այն միջավայրի հետ, որտեղ նրանք լույս են տեսել, նշելով նաև, որ իրենց բնույթով, հաղորդած լուրերի բազմազանությամբ նրանք դառնում են ավելի հետաքրքիր և լրնթեցանելի: Նոր պարբերականների շատանալը հայ իրականության մեջ հեղինակը իրավացիորեն բացատրում է ընթերցողների հետզհետե ավելանալով, այնչափ, շեշտում է նա, որ շուտով վարող է այդ քառակն էլ քիչ լինել և այն հանգամանքով, մանավանդ, որ նոր թերթերն «իրարմե երևելի տարբերություններ ունին» ու լրացնում են մեկը մյուսին: Այսպես, օրինակ, «Եվրոպա» թերթը, որի մասին հեղինակը բարձր կարծիք է հայտնում, ընթերցողներին հետաքրքիր ու օգտակար լուրեր է հաղորդում Եվրոպայի իրադարձությունների մասին, «Արշալույս Արարատյանը», որին նա մաղթում է բազմաթիվ արգելքների հաղթահարում և «փափագելի պայծառ առավոտ», տեղեկություններ է բերում Արևելքի և հայրենի իրականության մասին, իսկ Կալկաթայի «Ազգասերը»՝ «Հնդկաստանի ազգայնոց վրա, կամ անոնց հարմար ու ախորժելի նյութեր»⁴ և այլն:

Շատ հետաքրքրական է այն գնահատականը, որ տալիս է հոգևածի հեղինակը «Կովկաս» շաբաթաթերթին: «Կովկասը» նա բնութագրում է որպես «ազգասիրությամբ վառված լրագիր» և օգտակար («ամենահարկավոր») արևելահայության համար: «Աս լրագիրը, — գրում է նա, — Ռուսաստանի ազգայնոց վրա ավելի տեղեկություն կուտա մեզի, Եվրոպական լուրերն ալ ավելի Ռուսաց լրագիրներուն ու նաև լեզվին ոճովը կպատմէ. որով թեպետ հեռավոր եղբարց այնչափ ախորժելի չէ, և թերևս իրավամբ, բայց Ռուսաստանի բազմաթիվ հայերուն ալ անախորժ չէ, որովհետև անով ավելի դյուրիմաց կսեպվի անոնց և օգտակար»⁵: Այդ թերթերից բացի հեղինակը խոսում է նաև «Բազմավեպին» մասին, շեշտում նրա «բոլորովին տարբեր վախճան (նպատակ) ունենալը», նկատի առնելով, հավանաբար, նրա հայագիտական, պատմաբանասիրական բնույթը:

Հոգևածում հեղինակը կրկին անդրադառնում է «Հայաստան» լրագրին:

³ Նույն տեղում:

⁴ Տե՛ս նույն տեղում, № 20, էջ 311—312:

⁵ Նույն տեղում, էջ 313:

և դիպուկ կերպով նշում այն կարևոր հանգամանքը, որ Կ. Պոլսի նման մեծ մայրաքաղաքում, ազգային կյանքով ապրող և ժամանակի լուսավոր մտքերին հաղորդակից հայկական խոշոր զանգվածը «...հարկ է որ իր ազգային լրագիրը ունենար...»⁶։ Պոլսահայությունը մինչ այդ իրոք չէր ստեղծել դեռևս իր «ազգային», հայկական թերթը, չհաշված 1840-ին հայերեն շորս համար լույս տեսած «Ազդարար Բյուզանդյանը», քանզի «Լրո գիրը» իր անվանափոխություններով հանդերձ, տպագրում էր համարյա բացառապես պաշտոնական հաղորդագրություններ, հրովարտականներ, լուրեր և առհասարակ բավաճան հեռու էր կանգնած հայ ազգային կյանքի անցուղարձից։ Այստեղից էր առաջ գալիս, ի դեպ, այն որոշակի ոգևորությունը, որ կար հեղինակի մոտ «Հայաստանի» հանդեպ։

Հիշյալ հեղինակը հատուկ ուշադրություն է նվիրում թերթերի լեզվին, ոճին, շարադրության դյուրամբեկիությանը։ Շատ ուշագրավ է Մ. Թադիսյանի «Ազգասերից» որպես ոճի նմուշ բերված հետևյալ պատկերավոր հատվածը, որը հետաքրքիր է նաև իր խոր սոցիալական բովանդակությամբ։ Նշելով վաճառականության անկումը Կալկաթյում և դրա հետևանքով գործազրկության խիստ աճը, թերթը գրում է. «Մշակը և բեռնակիրը խառն բազմությունամբ ափսոս և անդ՝ի փողոցս մակաղին, որպէս ոչխարք տօթահար կող ի կող տուեալք, և առ ՚ի շկարելոյ գործել գրավական կերակուր՝ ճարակտուր ծածմ պահեն»⁷։

Որքան էլ հետաքրքիր ու արժեքավոր են «Բաղմավեպի» հեղինակի արած հակիրճ բնութագրումներն ու տված գնահատականները վերոհիշյալ առանձին պարբերականների մասին, այնուամենայնիվ դա ժամանակի հայ մամուլի ամբողջական պատմությունը չէ։ Մենք կանգ առանք այս նյութերի վրա, որպես ամենահնագույնները հայ լրագրության պատմական անցյալի մասին։ Այստեղ մնում է հիշատակել «Բաղմավեպի» մեկ ուրիշ նախածեղնությունը, դա Գ. Ալվ[ատյանի] «Օրագրաց և լրագրաց վրա» հոդվածի տպագրությունն է հանդեսի հաջորդ տարվա՝ 1848-ի երկրորդ համարում։ Իր նյութը քաղելով տարբեր աղբյուրներից, հեղինակը ուշագրավ տեղեկություններ է հաղորդում հայ ընթերցողներին պարբերական մամուլի սկզբնավորման, հասարակական կարծիքի ձևավորման գործում նրա կարևոր գերի ու նշանակության, այլևայլ երկրներում մամուլի տարածման մասին՝ նպատակ ունենալով բարձրացնել հայ ընթերցողի հետաքրքրությունն ու սերը առհասարակ դեպի լրագիրը և նրա ընդհանուր ընթերցասիրությունը։

* * *

Հայ պարբերական մամուլի պատմության առաջին աշխատությունների մեջ իրենց առանձնահատուկ տեղն են գրավում Փիլիպոս Ճամճյանի ուսումնասիրությունները՝ երկու հոդվածաշար, տպագրված «Եվրոպա» շաբաթաթերթում⁸։ Առաջինում («Ազգային լրագրաց ու օրագրաց օգտակար գործածությունը», «Եվրոպա», 1848, № 18, 19 և 21) Փ. Ճամճյանը մանրամասնորեն

⁶ Նույն տեղում։

⁷ Մեջբերումը ըստ «Բաղմավեպի», նույն տեղում, էջ 312։

⁸ Դրանք ստորագրված չեն, սակայն հայտնի է, որ հեղինակը Փ. Ճամճյանն է։ Տե՛ս Գ. Գալեմբյարյան, Պատմություն հայ լրագրության ի սկզբանե մինչև մեր ժամանակը, Վիեննա, 1893, էջ 16։

խոսում է պարբերական մամուլի նշանակության մասին ժողովուրդների կյանքում, լրագիր ընթերցելու, նրանից անհրաժեշտ պատմական, աշխարհագրական, տնտեսական, քաղաքական, գիտական ու այլ տեղեկություններ ձեռք բերելու օգտավետության և դրա պրակտիկ նշանակության մասին: Շեշտելով մամուլի դերի կարևորությունը հասարակական կյանքում, նա ավելացնում է. «Նորերս դրված զանազան դպրոցները, այնչափ օգտակար ընկերությունները, սաստիկ ուսումնասիրությունն ու հառաջացման բաղձանքը, և ամեն բանեն ավելի՝ հիմնական ազգային հոգին գրեթե լրագիրներուն ու օրագիրներուն միջնորդությամբը հառաջ եկան»⁹:

Շատ ուշագրավ են այն հորդորները, որ տալիս է Ճամճյանը հալ լրագրողներին՝ խմբագիրներին, թղթակիցներին և այլ հեղինակներին. «Կարողացողներուն համար բոլոր ըսածներուս մեծ մասը լրագիր ու օրագիր գրողներուն ալ կվերաբերի,— ասում է նա,— ապա շարունակում,— ...տրված լուրերը նոր, օգտակար ու ազգին վիճակին հարմար պիտի ըլլան, դեպքերուն ժամանակը պիտի նշանակվի, լեզվին ոճը մաքուր և օտար ու ռամկական խառնվածքներե ազատ պիտի՝ որ ըլլա, ածականներն ու պատվանունները որչափ որ կարելի է նե քիչ, կարգը դյուրիմանալի, գրվածքը ղվարթ ու ընտանեկան ընթացքով մը, բայց պետք չէ ծիծաղցնելու աշխատիլ»: Թղթակից-հեղինակները որքան շատ լինեն, շարունակում է իր մտքերը Ճամճյանը, այնքան լավ, քանի որ յուրաքանչյուր նյութ կատարյալ դարձնելու համար անհրաժեշտ է, որ գիտուն, մասնագետ մարդիկ գրեն դա: Եվ որովհետև այս ամենն արվում է ազգի (ժողովրդի) օգտակարության, առաջադիմության նպատակով, ապա ինչ որ խրախուսելի է, պետք է կատարել և ինչ որ վնասակար՝ խուսափել դրանից: Այս պատճառով էլ ազգային լուրերը, մեր կյանքում տեղի ունեցող նշանակալից երևույթները, ժողովրդի դարգացմանը նպաստող զաղափարներն ու գիտության հայտնագործությունները անպակաս պիտի լինեն մեր լրագրերի մեջ: «Ասոր ալ նայելու է,— ավելացնում է նա,— որ գրված բանը հաստատուն սկզբան մը կապվի, և ոչ թե ասոր անոր նախապաշարմանը հետևելով, կամ ժամանակին դյուրափոփոխ պարագաներուն հարմարելով, կամ միայն մարդու մը, կամ ոմանց հաճո ըլլալու և կամ իր կողմը մարդ շահելու մտքով շարադրվի: Անոր համար լավագույն է, որ բանի մը ճշմարտությունը բոլորովին հայտնի չեղած ատեն՝ մեկ կողմ մը չբռնվի, հապա երկու կողման ալ պատճառները դրվելով՝ իմաստուն կարդացողներուն թող տրվի որ իրենք կարդալով կշռադատեն: ...Դարձյալ լրագիր գրողները պատմաբան ըլլալով՝ մեծ զգուշություն մըն ալ աղբյուրներու և թղթակիցներու ընտրության մեջ պիտի որ ընեն, որոնք ճշմարտասեր ու ճշմարտախոս պետք են ըլլալ, բան ճանչցողներու առջևը հարգ ունենալ, երևելի խնդիրներու մեջ ըսածին հաստատուն տեղե մը ստուգելին բացահայտացնել, և վերջապես անանկ պիտի ըլլան, որ ո՛չ իրենք խաբւիին և ո՛չ ալ կարդացողները խաբեն»¹⁰: Ճամճյանը ևս կարևոր դեր է հատկացնում մամուլին մալրենի լեզվի դարգացման գործում: «Մեծապես հարկավոր է,— գրում է նա,— որ բոլոր մեր ազգային լրագրաց թե՛ գրաբարներուն և թե՛ աշխարհաբարներուն լեզվին ոճը կարելի եղածին չափ մաքուր, զրցվածքին կերպը կանոնավոր ու կոկիկ և բա-

⁹ «Եվրոպա», 1848, № 19:

¹⁰ Նույն տեղում:

ռեբր ճիշտ ըլլան, վասն զի լրագրներն ամենեն ավելի կարգացվելով՝ անոնց ոճերն ու բառերը բովանդակ ազգին մեջ կը տարածվին առհասարակ և բոլոր լեզվին վրա մեծ ազդեցություն կունենան, ու շատ անգամ՝ սովորական խոսակցությանց շարք կանցնին»¹¹։

Փ. Ծամճյանի երկրորդ հոդվածաշարը ամբողջովին նվիրված է հայ մամուլի պատմությանը և այդպես էլ կոչվում է՝ «Ազգային լրագիրներուն և օրագիրներուն պատմությունը» (կամ «Ազգային լրագրաց և օրագրաց պատմությունը»)։ Ուսումնասիրության բովանդակության գիտականությունը, տեսական լուրջ ընդհանրացումները, ընդգրկված պարբերականների համեմատաբար մեծ թիվը՝ 17 անուն¹² (սկսած «Դիտակ Բյուզանդյանից» մինչև «Բուրաստան ս. Սահակյանը»), տվյալների վստահելիությունը հիմք են տալիս մեզ համարելու Փ. Ծամճյանին հայ լրագրության առաջին ակնառու պատմաբանը։

Մամուլի իր պատմական տեսությունը Ծամճյանն սկսում է «Դիտակ Բյուզանդյանից», համարելով այն մեր անդրանիկ պարբերականը։ «Ազգերնուս մեջ առաջին լրագիրն աս եղավ, — գրում է նա, — զորն որ Վենետիկի Մխիթարյան մեծարգո միաբանությունը Արշարունյաց ընկերության խնդրելովն ու ձեռք բռնելովը 1812-ի օգոստոսի 1-ին սկսավ հրատարակել տասնուհինգ օրը մեջ մը կես թերթ աշխարհաբար լեզվով»¹³։ Այսպես է գրում Ծամճյանը ոչ այն պատճառով, որ մոռացության է տալիս դրանից առաջ նույն Վենետիկում լույս տեսած «Տարեգրությունն» ու «Եղանակ Բյուզանդյանը»։ Դրանք լավ ծանոթ են նրան։ Փ. Ծամճյանը պարզապես դժվարանում է այդ՝ ըստ էության տարեգիրք-ժողովածուները հայ պարբերականների շարքը դասել, նշելով, որ «Թեպետ և մեր դրած լրագիրներեն զատ՝ այլևայլ շրջանավոր (պարբերական—Մ. Բ.) գրվածքներ ալ ելան, որոնք քիչ կամ շատ լրագրաց կարգին կրնային վերաբերիլ, ինչպես են «Տարեգրությունն», «Եղանակ» և այլն, բայց ճշտիվ խոսելով՝ ասոնք իրենց վերադրվն ու ամեն մեկ մասն ուշ-ուշ հրատարակվելով՝ առաջիններեն վտարբերին ու զատ կարգ մը կցուցանեն մեր մատենագրության մեջ»¹⁴։

Սակայն մեր օրերի ընթերցողների մոտ բնականորեն հարց կառաջանա. հապա Մադրասի «Ազդարարը», ինչո՞ւ նրա անունը չկա Փ. Ծամճյանի մամուլի պատմության մեջ։ Այս հանգամանքը մեզ չպետք է զարմացնի։ Երկար ժամանակ այն ընդհանրացած կարծիքը կար, այդ թվում և եվրոպացի հայագետների մեջ, թե հայ պարբերական մամուլի հիմնադիրները եղել են Մխիթարյանները։ Առանձին հեղինակներ դրանում նույնիսկ որոշ միտում են փնտրել, ենթադրելով, թե այդ կարծիքը պաշտպանողները եղել են հենց իրենք՝ Մխիթարյանները։ Մեր համոզումն այն է, որ «Ազդարարը» Ծամճյանի շրջանում և, պարզ է, դրանից էլ առաջ, ուղղակի անծանոթ է եղել Մխի-

¹¹ Նույն տեղում, 1850, № 40։

¹² Նույն տեղում, 1850, №№ 28, 30, 34, 35, 37, 38, 40 և 1851 № 9։

¹³ Փ. Ծամճյանը «Ազգասերն» ու «Ազգասեր Արարատյանը» համարում է մեկ օրգան և ստանում է 16 օրգան։ Հայ ժամանակակից մատենագիտության մեջ դրանք համարվում են առանձին օրգաններ. այդտեղից էլ մեր նշած 17 թիվը։

¹⁴ «Եվրոպա», 1850, № 28։

¹⁵ Նույն տեղում։

թարյաններին՝ մեր մամուլի առաջին պատմաբաններին: Եվ ընդհանրապես անցյալ դարի 30—40-ական թթ. Կ. Պոլսի, Զմյուռնիայի և Եվրոպայի մեր գաղթօջախները ուղղակի տեղեկություն չեն ունեցել «Ազդարարի» մասին: Ա. Կարինյանը իր աշխատություններից մեկում¹⁶ գրում է. թե Շմավոնյանի ամսագիրը հայտնի էր արևմտահայ և արևելահայ առաջավոր ընթերցողներին: Դա կասկած չի վերցնում: Հայտնի է նաև, որ Ռուսաստանի հայոց առաջնորդ Հովսեփ արք. Արղությանը հնդկահայերին ուղղված իր կոնդակներն է տպել «Ազդարարի»¹⁷: Սակայն ճիշտ է նաև, որ այդ երկու պարբերականների՝ «Ազդարարի» ու «Եվրոպայի» միջև ընկած է մոտ կեսդարյա ժամանակամիջոց, և առանձին ընթերցողները դեռ չէին ապահովում այս կամ այն օրգանին իր տեղը նվաճելու հասարակության հիշողության մեջ, մանավանդ երբ խոսքը վերաբերում է մեր իրականության համար այն ժամանակ բոլորովին նոր մի երևույթի, ինչպիսին պարբերական մամուլն էր: «Ազդարարի» փոքր տպաքանակը (ինչպես հայտնի է, այն տկսեց լույս տեսնել, ունենալով ընդամենը 28 բաժանորդ), հնդկահայ գաղթօջախների հեռավորությունը արևմտահայ, թեկուզ և արևելահայ կենտրոններից (այն տարիների փոխադրական միջոցների պայմաններում), Եվրոպայում տիրող պատերազմական խառը իրավիճակը չէին նպաստում ամսագրին ուղի հարթելու դեպի այլ երկրամասեր: Ուշագրավ է, որ «Ազդարարից» կես դար հետո էլ Կալկաթայի «Ազդասերը» գանգատվում է, թե հայ թերթերը շատ ուշ են հասնում մի վայրից մյուսը (Զմյուռնիայից կամ Կ. Պոլսից Կալկաթա և հակառակը): «Զի ահա գրեթե տարին լրացավ,— գրում է շաբաթաթերթը,— յոր մեք զուրկ եմք թէ՛ յկրշալուսոյ և թէ՛ ի Հայաստանն»¹⁸, Այս պայմաններում զարմանալի չէ, որ նույն ինքը Ճամճյանը 1847-ի վերջին դադարած «Կովկաս» թերթի մասին 1850-ին գրում է, թե նրա «ներկա գոյությունը մեզի անծանոթ է»¹⁹, իսկ Թ. Միհրդատյանցը 1863-ին «Փարիզ» թերթում տպագրած իր ցուցակում նշում է, որ իբր նույն այդ «Կովկասը» դեռ շարունակվում է²⁰: Կարելի է բազմաթիվ նման փաստեր բերել: Սրանք պարզ մատենագիտական սխալների կամ թյուրիմացությունների հետևանք չէին, այլ մեծ մասամբ ժամանակի հաղորդակցության միջոցների և փոստային կապի թույլ զարգացման, իսկ երբեմն էլ միջպետական անբարենպաստ հարաբերությունների արդյունք: Հիմնականում այս էր պատճառը, որ բավական երկար ժամանակ «Ազդարարի» գոյությունը մնում էր անհայտ արևմտահայ մեր գաղթօջախներին: «Բազմավեպը» 1847-ի իր հոդվածներում «Ազդարարի» անունը չի հիշատակում, «Եվրոպան», ինչպես տեսանք, նույնպես անտեղյակ էր նրա գոյությանը: Դրա անուղղակի, բայց շատ համոզիչ փաստը տալիս է ինքը Ճամճյանը իր հոդվածաշարում, երբ խոսելով «Ազդասերի» մասին, այն միտքն է հայտնում, թե «Հնդկաստան ամենեն շատ հայազգիք Կալկաթայի

16 Տե՛ս Ա. Կարինյան, Ակնարկներ հայ պարբերական մամուլի պատմության, Երևան, 1956, հատ. 1, էջ 192:

17 Տե՛ս Լեո, Հայոց պատմություն, Երևան, 1946, հ. 3, էջ 1051:

18 Մեջբերումը ըստ «Բազմավեպի», 1847, № 20, էջ 312:

19 «Եվրոպա», 1850, № 40:

20 «Փարիզ», 1863, № 96:

մեջ ըլլալով՝ ամենեն առաջ (ընդգծումը մերն է— Մ. Բ.) հոն հաստատեցավ ազգային լրագիր մը 1845 տարվույն գրեթե կեսին, ասիկա հիմնողն էր Արատյան ընկերությունը, և խմբագրիչ (redacteur) պր. Մեսրոպ Դավթյան Թաղիագլանց հայրենասեր գրագետը²¹։ Եվ ոչ մի խոսք մինչև այդ լույս տեսած հնդկահայ մյուս թերթերի, այդ թվում և «Ազգարարի» մասին։

Երկու խոսք ևս այդ հարցի վերաբերյալ։

Մատենադիտական առաջին հավաստի տեղեկությունը «Ազգարարի» մասին, որ սկիզբ հանդիսացավ նրա համընդհանուր հանաչման համար, մենք գտնում ենք Գ. Ալեքսանյանի Կ. Պոլսում հրատարակած «Պեղատան թռչնիկ» թերթի անդրանիկ համարում (1863, 8 հունվարի)։ Նշելով, որ «Ազգարարն» սկսել է լույս տեսնել 1794-ից, Գ. Ալեքսանյանը իր հոդվածի ծանոթագրության մեջ բերում է շատ որոշակի տվյալներ «Ազգարարի» մասին, նա գրում է. «Սույն ազգագրու թերթին խմբագիրն է արժանատի արք. Զարուհյուն Շամվոնյան անուն հայկազն քահանա մը, շատ կցավիմք որ՝ հիշյալ լրագիրն որոշակի կյանք ունենալուն վրայոք անտեղյակ ենք, քանզի դեռ նոր անոր առաջին տարեկանը միայն տեսնելու պատիվ ունեցանք արգ. Ս. Միքայել աղայի միջոցալ»²²։ Ինչպես տեսնում ենք, «Պեղատան թռչնիկ» տվյալները լրիվ չեն, Գ. Ալեքսանյանի ձեռքի տակ եղել են «Ազգարարի» առաջին տարվա համարները միայն։ Հայ անդրանիկ պարբերականի մասին ավելի ամբողջական տեղեկություններ է հաղորդում Թադեոս Միհրդատյանցը նույն տարվա «Փարիզ» թերթի համարներում տպագրած իր ընդառնակ «Ցուցակ հայկական լրագրաց և հանգիսից» ուսումնասիրության մեջ, որին մենք դեռ կանդրադառնանք։

Սակայն անցնենք Փ. Ծամճյանի հոդվածաշարերին «Եվրոպա» շաբաթաթերթում։

«Եվրոպան» անցյալ դարի կեսերի նշանավոր պարբերականներից մեկն էր, աչքի էր ընկնում քաղաքական իր հարուստ բովանդակով, գրական, գիտական բազմազան նյութերով, հրատարակվում էր շատ խնամքով և նվաճել է իր կայուն տեղը մեր մամուլի պատմության մեջ։ Ժամանակին «Եվրոպա» շաբաթաթերթից օգտվել են հայ հասարակական մտքի, գրականության ու մշակույթի պատմության մեր հետաքրքիր գիտնականները։ Սակայն նրանց տեսադաշտից վրիպել է թերթում տպագրված Փ. Ծամճյանի ծավալուն զուգահեռաշարը՝ նվիրված հայ մամուլի անցյալին։ Այն ուղղորդության արժանի գործ է։

Փ. Ծամճյանի ուսումնասիրությունը (անկախ իր թերթի կողմերից) արժեքավոր է ինչպես պարբերականների մեծ մասի վերաբերյալ ժամանակակցի իր վկայություններով, բազմապիսի տեղեկություններով հրատարակության վայրի (գաղթօջախի), թերթերի հիմնադրման, խմբագիր-հրատարակիչների, թղթակից-աշխատակիցների և դադարման պատճառների մասին, այնպես էլ նրանց բովանդակությանը, քաղաքական ուղղությանն ու հե-

²¹ «Եվրոպա», 1850, № 34։

²² Ս. Միքայել աղայի անձնավորությունը մեզ անծանոթ է։ Վերևում «Հավաստի տեղեկություն» բառերը մենք գործ ենք ածում. պայմանականորեն։ Հնդկահայ մամուլը «Ազգարարի» քոլորից չէր մոռացել։ Հայ անդրանիկ թերթի մասին «Ազգասերի» (1847, № 17), «Ազգասեր Արարատյանի» (1851, № 66) և «Ուսումնասերի» (1851, № 43) հիշատակումները նույնպես միանգամայն հավաստի են, սակայն այդ տեղեկությունները ժամանակին համընդհանուր ճանաչում չգտան։

տապնդած նպատակներին տված գնահատականներով ու բնութագրություններով:

Փ. Ճամճյանն իր աշխատության մեջ ընդգրկել է, ինչպես ինքն է ասում, հալ բոլոր պարբերականները, «...ի սկզբանե մինչև հիմա» (1851): Մենք տեսանք թե նա ինչու չի անդրադարձել «Տարեգրությանն» ու «Եղանակ Բյուզանդյանին» և անժանոթ է եղել «Ազդարարին»: Բայց նրա ուսումնասիրության մեջ չեն մտել նաև շուրջ մեկ տասնյակ այլ պարբերականներ, որոնք հայտնաբերվել են ավելի ուշ ժամանակներում, ինչպես օրինակ՝ «Արևելյան ծանուցամունքն» է (Աստրախան, 1816), «Հայելի Կալկաթյանը» (1820), «Շտեմարանը» (նույնպես Կալկաթա, 1821—1823), երկրորդ «Ազդարարը» (Մադրաս, 1846—1847), մյուս «Հայրենասերը» (Նիկոմիդիա, 1850) և այլն: Այդ գործում նրան հանդիմանել ոչ մի կերպ չի կարելի: Բերենք միայն մի օրինակ, ամենից ավելի թարմը. միայն վերջերս, այն է՝ Փ. Ճամճյանի ուսումնասիրության հրապարակումից մոտ 130 տարի հետո պարզվեց, որ Կալկաթյանում, դեռևս 1841 թ. լույս է տեսել «Շաբաթական աստղ» բոլորովին անժանոթ վիճակի օրաթերթը: Հայ իրականության մեջ դա զարմանալի երևույթ չէ:

Ինչպես ասացինք, Փ. Ճամճյանի մամուլի պատմական տեսությունն ընդգրկում է 17 անուն պարբերական, ահա դրանք.

- «Ինտակ Բյուզանդյան» (Վենետիկ)
- «Լրոյ գիր» (Կ. Պոլիս)
- «Շտեմարան պիտանի դիտելյաց» (Զմյուռնիա)
- «Արշալույս Արարատյան» (Զմյուռնիա)
- «Ազդարար Բյուզանդյան» (Կ. Պոլիս)
- «Բազմավեպ» (Վենետիկ)
- «Հայրենասեր» (Զմյուռնիա)
- «Ազգասեր» (Կալկաթա)
- «Կովկաս» (Թիֆլիս)
- «Հայաստան» (Կ. Պոլիս)
- «Եվրոպա» (Վիեննա)
- «Ազգասեր Արարատյան» (Կալկաթա)
- «Սուրհանդակ Բյուզանդյան» (Պոլիս)
- «Բանասեր» (Մադրաս)
- «Ուսումնասեր» (Սինգապուր)
- «Արարատ» (Թիֆլիս)
- «Բուրաստան ս. Սահակյան» (Կ. Պոլիս)

Քննարկված մամուլի տեսության հարցերին Փ. Ճամճյանը մոտենում է միանգամայն ռեալիստորեն, արժեքավորելով յուրաքանչյուր պարբերական նրա կատարած դերով հայ հասարակական և մշակութային կյանքի տարբեր բնագավառներում: Ամենից առաջ նա ուշադրություն է դարձնում թերթի ընդհանուր բովանդակության, շոշափած հարցերի ալթմեթյան, լուրերի բազմազանության ու հարստության վրա, ինչպես և ներքին կյանքի, տեղական, ներհամայնքային խնդիրների վրա, մանավանդ եթե դրանք կապված էին հայ հասարակության ազգային ինքնագիտակցության բարձրացման, գիտության,

լուսավորության տարածման հետ: Մեծ տեղ է տալիս թերթերի լեզվին, ջատագովում է ժողովրդի խոսակցական (աշխարհաբար) լեզվի զարգացման ու հարստացման հարցերը: Նա կարևոր է համարում հաղորդել, որ «Արշալույս Արարատյանն» իր բաժանորդներն ունեն Ռուսաստանում ու Հնդկաստանում, «Ազդարար Բյուզանդյանը»՝ իր «մասնավոր թղթակիցները» զանազան վայրերում:

Խոսելով «Շտեմարան պիտանի գիտելյացի» մասին և նշելով նրա նութերի բազմազանությունն ու հաջող ընտրությունը, լավ աշխարհաբար լեզուն, մաքուր տպագրությունն ու էթանությունը («գրեթե ձրի կտրվեր»), Ճամճյանն ընդգծում է, որ այն բողոքական միսիոներների օրգանն է և նրանց «...ձեռքի տակեն սկսյալ ու առաջնորդյալ ըլլալով՝ մեջը իրենց սկզբունքը ցանված էր»: Խոսքը տվյալ դեպքում բողոքական միսիոներների պրոպագանդի մասին է, որի նպատակն էր հայ ընթերցողների մեջ ամլացնել, խաթարել ազգային ինքնագիտակցության ոգին, շեղել նրանց ուղարկությունը ներքին սոցիալ-քաղաքական և ազգային-ազատագրական հարցերի ոլորտից, հոգևոր օտարացման ենթարկել նրանց: «Շտեմարան պիտանի գիտելյացի» դերի ու նշանակության նման հարցադրումով ու լուսաբանությամբ Փ. Ճամճյանը մի քանի տասնամյակով կանխում է և՛ Գ. Զարբհանյանին, և՛ Գ. Գալեմբյարյանին:

Հիմնավորված ու դիպուկ բնութագրումներ է տալիս Փ. Ճամճյանը նաև մյուս սյարքերականներին, հատկապես երբ անդրադառնում է Մ. Թադևադյանի թերթերին: Նա բարձր է գնահատում թե՛ «Ազգասերը» և թե՛ «Ազգասեր Արարատյանը», շեշտում է նրանց բովանդակության հարստությունը, հնդկահայ զաղթօջախին նվիրված նյութերի բազմազանությունը, հայրենասիրական ոգին, լեզվի «կենդանի ու խաղացկուն» ոճը, ճոխությունը: Պատահական չէ, որ հետագայում Գ. Գալեմբյարյանը հայ մամուլի իր պատմության մեջ այդ թերթերի և «Կովկասի» ու մի շարք այլ պարբերականների մասին խոսելիս հենվում է համարյա ամբողջովին «Եվրոպայի» արտահայտած տեսակետների վրա, ընդարձակ մեջբերումներ կատարելով Ճամճյանից²³:

Հետաքրքիր են Ճամճյանի արտահայտած կարծիքները Մադրասի «Բանասերի», նրա ազատախոհ բնույթի մասին, որը շատ էլ դուր չէր գալիս հնդկահայ վերնախավին: «Իր նյութը,— գրում է հեղինակը,— գլխավորաբար էր ազգային, տեղական ու կրոնական խնդրոց վրա խոսիլ ու վիճել. հոնտեղաց հայ եկեղեցականաց ու աշխարհական պաշտոնատյարց ընթացքը քննել, դատել ու հանդիմանել...»²⁴: Թերթի սուր գրիչն ու քննադատական ոգին, նշում է Ճամճյանը, լայն ընդունելություն չգտան ընթերցող հասարակության մեջ: Շատերը, դրում է նա, «...կես մը անոր ոճը կծողական սեպելով, կես մ'ալ գուցե իրենք ազատ տպագրության հանդիմանական խրատներն ընդունելու վարժած չըլլալով՝ ամեն մեկ առթի մեջ կամաց կամաց նույն լրագիրը թողուցին, որով ի վախճանի ըստիպեցավ բոլորովին դադրիլ»²⁵:

23 Դա չի խանգարում Գ. Գալեմբյարյանին իր գրքի «Աղբերք պատմության հայ գրականության» բաժնի Փ. Ճամճյանին նվիրված ութ ժլատ տողերում այն միտքը հայտնելու, թե վերջինս իր հոգվածաշարում զբաղվել է «յուրաքանչյուր լրագրույն վրա երկար ճառելով» (էջ 16):

24 «Եվրոպա», 1850, № 38:

25 Նույն տեղում:

Փ. Ճամճյանը վեր է հանում նաև հասարակական կյանքում մամուլի ունեցած դերի մեծ կարևորությունը և, որ ուշագրավ է, դեռևս անցյալ դարի կեսերին շեշտված կերպով ընդգծում է բուրժուական մամուլի կեղծիքները. «...Ինչպես իրավամբ կ'ըսե Խալիլայի լրագիրներն մեկը,— գրում է նա իր հոդվածաշարի վերջում,— հիմակվան ատենս Եվրոպայի 20 լրագրին մեջ հազիվ թե կրնաս 1 լրագիր գտնել, որն որ աղեկ հոգի ունենա, այլ գրեթե ամեն մեկը ծուռ ու մուգ ճամփաներով իրենց ծածուկ դիտավորությունը և ընթերցողներն որսալու և իրենց գերի ընելու կշանան»։ Եվ ապա. «Եվրոպայի ազգաց մեջ շատ հեղ կատտահի, որ խմբագիրներեն ոմանք վատություններ ուրիշ պետությունե կամ ուրիշ մարդե կաշառ առնելով՝ նույն տերություն կամ մարդուն վարձկանագրիչը կ'ըլլան և իրենց սեփական ազգին օգուտը կ'վաճառեն...»²⁶։

Փ. Ճամճյանի հոդվածաշարն ունի շատ հետաքրքիր մի բաժին ևս. դա «Լրագրական գլխավոր բառից հավաքում այբուբենի կարգով» վերնագիրը կրող մասն է, կամ այլ կերպ ասած՝ լրագրային տերմինների բառացուցակը։ Այդ բառացուցակը փաստորեն նրա հոդվածաշարի շարունակությունն է կազմում և ցույց է տալիս հեղինակի մտահոգությունը՝ ամեն կերպ օգնելու հայ լրագրության մեջ մասնագիտական տերմիններ ստեղծելու գործին, հալ ծուռնալիստիկան բարձրացնելու ժամանակի եվրոպականի մակարդակին։ Մինչ այդ հայ լրագրային տերմինների կանոնավորման, նրանց գործածության մեջ միասնականություն մտցնելու հարց չէր դրվել, դրանք դեռ նոր էին ստեղծվում, մասամբ թարգմանաբար՝ եվրոպական լեզուներից, մասամբ ինքնուրույն ձևով, աստիճանաբար քաղաքացիական իրավունք ձևեր բերելով։ Այստեղից էլ հասկանալի է այն խայտաբղետությունը, որ կար հայ լրագրային տերմինների գործածության մեջ։ Այսպես, օրինակ, ներկայիս բաժանորդ հասկացությունը, որ եվրոպական լրագրության մեջ նույնպես տարածված չէր, տարբեր պարբերականներ արտահայտում էին բաժանագիր, ընկերագիր, ստորագրյալ, ստորագիր, ստորագրող տերմիններով, խմբագիրը երբեմն գրվում էր բանախաղ, երբեմն՝ վերատեսուչ, կազմարար (որ առանձին դեպքերում նույնանուն էր տնօրեն հասկացության հետ), խմբագրատունը՝ կազմարարան, պարբերական հրատարակությունը՝ շրջանավոր (periodique) և այլն։ Փ. Ճամճյանի արժանիքն այն է, որ նա առաջին անգամ հրապարակայնորեն, մամուլի էջերում անդրադարձավ այդ հարցին։ Բերելով մամուլում գործածվող տերմինների ցուցակը, նա միաժամանակ իր կարծիքն ու նկատառումներն է հայտնում այդ բառերի իմաստի, գործածության նպատակահարմարության մասին, համեմատելով մի շարք տերմիններ եվրոպական լեզուներում գործածվող նրանց համարժեքների հետ։ Ուշագրավ է, որ շատ ազգերի մեջ ընդունված Gazette բառը մոտոք չի գործում հայերենի մեջ, Ճամճյանը հատկապես շեշտում է այդ, առավելությունը տալով լրագիր բառին. «Գրեթե բոլոր եվրոպացիք,— գրում է նա,— Gazette կկանչեն։ Լրագիր բառը շատ ընտիր է...»²⁷։

Լրագրային իր բառացանկը Ճամճյանը տալիս է, ինչպես նշված է վերելում, այբբենական կարգով՝ ամսագիր, ամսաքերք, անհրաժեշտության դեպ-

²⁶ Նույն տեղում, № 40։

²⁷ Նույն տեղում, № 41։

քում նաև մեկնաբանելով դրանք, երբեմն ավելացնելով ֆրանսերեն կամ գերմաներեն համարժեքները: Այսպես, օրինակ, վերևի երկու բառերին նա ավելացնում է. «անանկ լրագիր, որն որ միայն ամիս ամիս կհրատարակվի» (Monatsschrift), այգաթերթ. առտունները հրատարակված լրագիր» (որ մինչև այսօր էլ գործածելի է արևմտահայ մամուլում), երեկոյան թերթ, թղթակից, ապա լրագիր, որի դիմաց ավելացնում է. «որոշ ժամանակի մեջ հրատարակված թերթ, որն որ կամ պարզ քաղաքական լրեր և կամ անոնց հետ մեկտեղ նաև ուրիշ ուսումնական հատվածներ ալ կուտա». լրագրություն, օրագրություն. «լրագիր շինելու արվեստը, մատենագրության մեջ լրագրական ճյուղը և լրագրաց հոգին, բունած ճամփան, ազդեցությունը (Journalisme)»: Ապա գալիս են խմբագիր, խմբագրիչ, կիսամագիր, հոգված կամ հատված, շաբաթագիր, շաբաթական թերթ, օրագիր, օրաթերթ. «Ճշտիվ խոսելով,— մեկնաբանում է նա,— վերջին բառը կ'ըսվի ամեն օր ելած լրագիրին. բայց նշանակությունն ընդարձակվելով՝ ամեն օր չելած լրագիրներուն ալ կ'ըսվի, բավական որ զանազան օրերուն մեջ պատահած երևելի դեպքերը պատմե» (Journal): Ոմանք ան գաղափարն ունին, որ լրագիր ըսելով՝ հասարակորեն ուսումնական կամ բանասիրական օրագիր կ'իմացվի, բայց ասիկա գործածության մեջ չի պահվիր»²⁸ և այլն:

* * *

Հայ մամուլի պատմությանը վերաբերող նյութեր շարունակեցին հրատարակվել նաև հաջորդ տասնամյակում: 1863-ի ընթացքում միանգամից լույս տեսան մամուլի երեք ցուցակներ²⁹: Դրանցից առաջինը «Պեգասյան թռչնիկ» կիսամյայի առաջին համարում (8 հունվար) տպագրված հոդված-ցուցակն է, երկրորդը՝ Վ. Լանգլուայի ցուցակը (Les journeaux chez les Arméniens)՝ տպագրված Փարիզի «Revue de l'Orient»-ի ապրիլ-մայիս համարներում և երրորդը՝ արդեն հիշատակված Թ. Միհրդատյանցի հոդվածաշարը, որ լույս է տեսել «Փարիզ» թերթի նույն 1863-ի օգոստոս-սեպտեմբեր ամիսների 96, 97 և 98 համարներում:

«Պեգասյան թռչնիկի» հոդված-ցուցակը կրում է «Նոր դարուս ոգին» վերնագիրը³⁰: Այն շատ յուրահատուկ, վերամբարձ ոճով գրված մի շարադրանք է մինչև այդ լույս տեսած հայ պարբերականների անունների շուրջը: Ահա նրա սկիզբը, որ հնարավորություն կտա ընթերցողին պատկերացում կազմելու այդ շարադրանքի մասին. «Տասնևութերորդ դարուն վերջերս (1794-ին) Մատրասի մեջեն Հայկյան «Ազդարարը» առաջին փողը կզարնե հայ սրտերը. բազմաժամանակյա խորին թմրութենեն դարթուցանելու... Վենետիկի մեջ իբր անցյալ տխուր տարիներուն «Տաբեգրությունը» ըլլալով՝ կկնքվի անցելույն ցավալի հիշատակը, և աս տասնևիններորդ նշանավոր դարուն սկիզբները՝ հայկական քրականության և լուսավորության նոր ասպա-

²⁸ Նույն տեղում:

²⁹ Չհաշված նույն 1863-ին «Բազմովեպի» առաջին համարում լույս տեսած «Ցանկ հայերեն տպագրության 1862 տարվույն»-ը, որտեղ թվարկվում են այդ թվականին լույս տեսնող պարբերականների անունները:

³⁰ Ստորագրված չէ. ամենայն հավանականությամբ այն պատկանում է խմբագիր Գր. Ալեքսանյանի գրչին:

ՏՊ Ասեղյան, № 2

րեզր կբացվի: Հայնժամ առաջ կանցնի Մխիթարյանը ուսերը վեր տնկելով խապարմիշ կըլլա «Բուդապեշտի աղոտ Դիտակով» աս նոր ոսկեղարին պարգևելիք հազվագյուտ ձիրքերը զննելու... «Նղանակե» ալ զույգ ընդ նմին կսկսի ամեն բան կարգի դնել ու եղանակավորել...» և այլն: Եվ այս ոճով մինչև ավարտ: Միայն վերջում ծանոթությունների ձևով տրված են պարբերականներից յուրաքանչյուրի հրատարակության սկիզբն ու վերջը և առանձին նշվել են շարունակվող թերթերը: Այս եղանակով հոգված-ցուցակում հիշատակված է 66 անուն պարբերական: Կան որոշ անճշտություններ, տեղեկություններ չեն տրվում թերթերի մի մասի հրատարակության վայրի մասին, չեն բերված խմբագիր-հրատարակիչների ազգանունները, թերթերի պարբերականությունը և մատենագիտական այլ տվյալներ: Այս ամենը զգալիորեն իջեցնում է Գ. Ալեքսանյանի հոգված-ցուցակի գիտական արժեքը, թեև այն ուշագրավ է որպես մատենագիտական փաստ մեր մամուլի պատմության մեջ:

Ինչ վերաբերում է Վ. Լանգուալի հոգվածին, ապա ցավոք մենք այն չկարողացանք գտնել: Գալեմբյարյանը հաղորդում է միայն, որ Լանգուալն այդ հոգվածում խոսում է «...1812—1863 հրատարակյալ 60-է ավելի լրագրաց վրա...»³¹: Ավելի հանգամանորեն Լանգուալի ցուցակի մասին տեղեկություններ է հաղորդում «Փարիզ» շաբաթաթերթը, որը մենք մեջ ենք բերում ամբողջովին, չնայած իր ընդարձակությանը, հաշվի առնելով նրա կարևորությունը: «Փարիզու գաղղիներեն «Ռեվյու դ'Օրիան» ռասումնական հանդեսն իր վերջին (ապրիլ-մայիս, 1863) թվույն մեջ Հայոց ազգին լրագրաց և հանդիսից պատմությունը կ'պարունակե՝ որ շատ կարևոր ու հետաքրքրական է: Հոգվածույն հեղինակն է արժանահարգ պ. Վ. Լանկուա հայասեր գաղղիացին՝ որ հույժ մտադրությամբ քննելով և ամեն օրագրաց վերա ճիշտ տեղեկություններ հավաքելով՝ կատարելագույն ըրած է այս պատմական երկասիրությունը: Պ. Վ. Լանկուա բնավ հայերեն թերթ մը դուրս թողած չէ, և շատ օրագրաց պատմությունները կրեն, որոց բոլորովին անտեղյակ կգտնվինք: Արժանահարգ հեղինակը 1812 թվականեն մինչև ցայսօր թուրքատան, Ռուսաստան, Հնդկաստան, Իտալիա, Ավստրիա և Գաղղիա հրատարակյալ 60-են ավելի օրագիր կհաշվե և անոնց պատմությունը կրեն:

Վերջապես այս աշխատությունը, որ հայ գրականության բարեկամներուն ուշադրությունը պիտի գրավե, մինչև ցարդ գրվածներուն ամենեն կատարելագույնն է: Կցավինք, որ անոր ընդարձակությունը չներեր մեզի թարգմանությունը լրագրույս միջոցով ազգին բանասիրացն հաղորդել»³²:

Ավելին Լանգուալի ցուցակի մասին մեզ հայտնի չէ: Շփոթություն է առաջ բերում ընթերցողների մեջ Գ. Գալեմբյարյանի մեկ ուրիշ հայտարարությունը, թե իբր «Փարիզ» լրագրո 1863, թ. 97-ի մեջ եղած լրագրաց ցուցակն՝ անշուշտ ասոր (այսինքն Լանգուալի ցուցակի—Մ. Բ.) թարգմանությունն է»³³: Այս վերագրումը ճիշտ չէ, «Փարիզ» թերթում տպագրված ցուցակի հեղինակը Թ. Միհրդատյանցն է: Ինչպես երևում է, Գալեմբյարյանի ձեռքի տակ չի եղել «Փարիզի» 1863-ի № 96-ը, որտեղից սկսվում է Թ. Միհրդատյանցի ցուցակ-հոգվածաշարը: Այնտեղ, խմբագրական ծանուցման մեջ,

31 Գ. Գալեմբյարյան, նշվ. աշխ., էջ 199:

32 «Փարիզ», 1863, № 94:

33 Գ. Գալեմբյարյան, նշվ. աշխ., էջ 199:

շատ որոշակիորեն ասված է. «Հետևյալ կարևոր աշխատասիրությունը, որոնք ձեռնամուխ եղեր է բազմաշխատ մեծահարգ պ. Թադևոս Միհրդատյանց՝ մեծարգո պ. Լանկլոտայի նմանօրինակ երկասիրության նպաստելու դիտմամբ, այս օրերս անոր առաքած՝ լինելով (որ նա արդեն իր գործն ի լույս ընծայած էր), արժան համարեցինք լրագրության միջոցով հրատարակել, որպեսզի ասանկ կարևոր գործ մը կորստյան չմատնի»³⁴։ Այսպիսով, «Փարիզ» թերթում տպագրված ցուցակի հեղինակի հարցը կատկած չի հարուցում³⁵։

Թ. Միհրդատյանցի աշխատությունը կրում է «Ցուցակ հայկական լրագրաց և հանդիսից» վերնագիրը, ընդգրկում է 70 տարվա ժամանակաշրջան՝ սկսած 1794-ի հոկտեմբերից («Ազդարարի» սկզբնավորումից) մինչև 1863-ի ապրիլի վերջը։ Այնտեղ նկարագրված են 77 անուն պարբերականներ (համալրակված), որ շուրջ մեկ տասնյակով ավելի է, քան նույն տարում հրատարակված նախորդ ցուցակներն են տալիս։ Պարբերականներից յուրաքանչյուրի մասին հեղինակը հաղորդում է տեղեկություններ նրանց սկզբնավորման, տևողության ու դադարի, ինչպես նաև հրատարակության վայրի և խմբագիր-հրատարակիչների վերաբերյալ։ Այն թերթերը, որ նա իր ձեռքի տակ չի ունեցել, նկարագրել է այլ աղբյուրների հիման վրա։ Բոլոր դեպքերում նա իր ուսումնասիրությունը կատարել է մեծ բարեխղճությամբ, թեև նրանոս կան և մի շարք անճշտություններ, որոնք առաջ են եկել մեծ մասամբ պարբերականներն ու նրանց լրիվ հավաքածուները ձեռքի տակ չունենալու հետևանքով, մի տեսակով երևույթ, որն ուղեկցել է աշխարհով մեկ ցրված հայ մամուլի պատմությունն ուսումնասիրողներին՝ բոլոր ժամանակներում։

Միհրդատյանցի այս գործը մեծ մասամբ անուղադիմ է բնույթ է կրում և դրանով էլ տարբերվում է Ճամբայանի աշխատությունից։ Նրա առավելությունն այն է, որ ընդգրկում է իր ժամանակի ամբողջ հայ մամուլը՝ քիչ բացառությամբ³⁶։ Մամուլի այս «ի մի հավաքելը» այդ շրջանում ինքնին արդեն դրական երևույթ էր, դյուրացնում էր ու լայնացնում նրա ուսումնասիրության, պատմությունը գրելու գործը, որը ձեռնարկեցին հայ գիտության բնագավառի աշխատողները հետագա երկու-երեք տասնամյակների ընթացքում։

Իր ցուցակի մեջ Միհրդատյանցը մտցրել է նաև ժամանակի հայատառ թուրքերեն պարբերականները («Մեհմուլալը Հավատիս», «Զոհալ», «Ճերթիտի Թիհարեթ», «Մյունաստիյի էրեհաս», «Ախպարը Գոնսթանթինիյե»), միանգամայն իրավացիորեն համարելով դրանք հայ մամուլի անբաժան մասը։ Բացի այդ, առաջին անգամ հայ մամուլի ցուցակներում նա մեջ է բերում նաև երեք հայտարարված, բայց լույս չտեսած թերթերի անուններ («Լուսասփյուռ», «Հայդեկ» և «Մադկոցաձոր»), որ կարևոր էր հետագայում մամուլով զբաղ-

34 «Փարիզ», 1863, № 96։

35 Վ. Լանկլոտայի և Թ. Միհրդատյանցի անունները շահակապող տվյալ հարցում եղել է այն փաստը, որ ֆրանսիացի հայագետը իրոք խնդրել է Միհրդատյանցին օգնել իրեն հայ պարբերական մամուլի ցուցակ կազմելու գործում (Տե՛ս Թեոդիկ, Ամենուն տարեցույցը, 1926, էջ 666—667)։ Սակայն, ինչպես ցույց է տալիս «Փարիզ» թերթի խմբագրական ծանուցումը, Միհրդատյանցը ցուցակն ուղարկում է այն ժամանակ, երբ Լանկլոտան «իր գործն ի լույս ընծայած էր»։

36 Բավական է ասել, որ այդ բացառությունները մեջ մտնում են մի քանի հնդկահայ թերթեր, որոնց մասին ամբողջական ու ստույգ տեղեկություններ չունենք նույնիսկ մեր օրերում։

վողներին զերծ պահելու ավելորդ թյուրիմացություններից: Միհրդատյանցի ցուցակի մեջ կան նաև երկու ձեռագիր թերթեր («Զեփյուռ Հայաստանյայցն» ու «Մրջնիկը») և երեք այլ անուններ («Անդրանիկ», «Սուրհանդակ» և «Ծղանակ Զմյուռնիո»), որոնց գոյություն մասին, սակայն, նա վստահորեն չի արտահայտվում: Հետագայում դրանց՝ որպես մամուլի օրգաններ լինելու ենթադրությունը չհաստատվեց:

Թ. Միհրդատյանցը ցուցակը կազմել է ժամանակագրական կարգով, որ ամենանպատակահարմար ձևն է նման մատենագիտական ուսումնասիրությունների համար: Այդ աշխատանքի ընթացքում նա օգտագործել է, ինչպես երևում է իր մի հիշատակումից, նաև «Պեղասցյան թուղթիկի» ցուցակը: Սակայն տեղեկություններ չկան, թե նրա ձեռքի տակ եղե՞լ են «Բազմավեպի» կամ Փ. Ծամճյանի ցուցակները: Ամենայն հավանականությամբ Միհրդատյանցը մոտիկից ծանոթ չի եղել այդ նյութերին, արևապես նա չէր կարող դրանք լռության մատնել:

Մատենագիտական հնարավոր ընդարձակ տեղեկությունների հետ միասին Միհրդատյանցը իր ցուցակում տալիս է նաև թերթերի մի մասի համառոտ բնութագրումը, խոստով է նրանց բովանդակության, հետապնդած նպատակների, ուղղության մասին: Հայ անդրանիկ պարբերականի վերաբերյալ նա գրում է. «Ազդարար», ի Մադրաս հրատարակչալ, ձեռամբ տ. Հարություն հայկազն բազմաշխատ քահանայի Շմավոնյան Շիրազեցվո. սա անդրանիկ և սկիզբն է բոլոր հայերեն լրագրաց և հանդիսից, որ սկսյալ է ի 1794, թիրա (հուլիս) ամսն մինչև ցվերջն 1796 տարվան³⁷: ...սկսած ճոխությունը ու հետաքրքրական և ազգային տեղեկությունները հայտնապես կվայելն թե անշահասեր՝ ազգասեր և հմուտ անձի մը գործ է: Եվ եթե ներվի, կրնամ ըսել թե, իրեն հաջորդող բոլոր հայ հանդեսներուն և լրագիրներուն պատվականագույնն է...»: Հեղինակն իր զարմանքն է հայտնում հայրենասեր խմբագրի ջանասիրության ու նվիրվածության վրա, որ խավար կարծված այդ ժամանակներում, ինչպես ասում է նա, պանդխտության մեջ, Եվրոպայի քաղաքակրթված ու լուսավորյալ կենտրոններից հազարավոր մղոններով հեռու մի վայրում կարողացել է նման մի հարուստ պարբերական ստեղծել, «որով հայտնի կերևա հայ ազգին ուսումնասիրության ու քաղաքակրթության մեջ ունեցած տաղանդն ու փափագը...»³⁸:

Անդրադառնալով վենետիկի «Տարեգրությունը», նա հայտնում է, որ այն սկսվել է 1799-ին, դադարել է 1802-ի վերջին, կազմված է փոքրիկ տետրակներից, «...որոնց մեջ,— ավելացնում է նա,— բանասիրականն զատ՝ հիշյալ յուրաքանչյուր տարվուն պատահած թե՛ եկեղեցական և թե՛ քաղաքական երևելի դեպքերն համառոտակի նկարագրված են»³⁹: Դրականորեն է խոսում Միհրդատյանցը Թիֆլիսի «Կոունկ Հայոց աշխարհին» հանդեսի մասին: «Սու մինչև ցարդ հրատարակված բոլոր հայ հանդեսներուն ճոխագույնը և սլա-տ-

37 «Ազդարարը», լույս է տեսել մինչև 1796-ի մարտը (երկու համար՝ օվդան և նիրհան՝ այն է՝ հունվար և փետրվար ամիսներին): Սխալն առաջացել է նրանից, որ Միհրդատյանցը ինչպես ինքն է գրում, «Ազդարարի» 1796-ի համարները չի տեսել:

38 «Փարիզ», 1863, № 96:

39 Նույն տեղում:

վականը կրնա ըսվիլ»,— գրում նա⁴⁰։ Եվ ընդհանրապես, բացասական գնահատական է տալիս Կ. Պոլսի նույն ժամանակաշրջանում լույս տեսնող «Արեւիկյան դարին», մեղադրելով նրա խմբագիր Գր. Տեիրմենճյանին ու նրա թերթը զաղափարական ճղճիմություն մեջ։

Ավարտելով իր ուսումնասիրությունը, Թ. Միհրդատյանցը հանգում է մի շարք քննադատական եզրակացությունների ժամանակի հայ մամուլի վիճակի մասին։ Ընդհանրապես նա այդ վիճակը համարում է անմխիթար, պատճառները վերագրելով մասամբ բանիմաց և փորձառու խմբագիր-հրատարակիչներ չլինելուն, մասամբ էլ՝ հայ ընթերցող շրջանների սպասելիությանը և նյութական միջոցների բացակայությունը։

Թաղեոս Միհրդատյանցը խորապես ցանկում է, որ հայ ընթերցող հասարակությունը չի կարողանում թերթը կամ հանդեսը պահելու համար գտնել 500 «ստորագրվող» ապահովել և դառն հեղինակություն խորհուրդ է տալիս «անփորձ ուսումնականներին» պարբերական հրատարակելու համար «հառաջիկա քսաներորդ դարուն սպասեն և այն ժամանակը հրատարակեն իրենց աշխատությունը (եթե չեն սկսած), քանզի կարելի է որ նույն դարուն մեջ այնքան ստորագրվող կրնան ունենալ»⁴¹։

Թ. Միհրդատյանցի այս հոռետեսական մտորումները բոլորովին անհիմն չէին, իհարկե, հայ պարբերական մամուլը դժվարությամբ էր իր ուղին հարթում։ Սակայն անընդհատ աճում էր, ավելի լայն տեղ գրավում հայ հասարակական կյանքում, որը իր արտացոլումը գտավ հայ լրագրության սլաքաձևների արդեն հետագա աշխատություններում։

ПЕРВЫЕ ИСТОРИКИ АРМЯНСКОЙ ПЕРИОДИЧЕСКОЙ ПЕЧАТИ

Кандидат филол. наук М. А. БАБЛОЯН

(Резюме)

Армянская периодическая печать возникла на рубеже XVIII и XIX веков (1794 г., Мадрас) и скоро заняла важное место в общественно-политической и культурной жизни армянского народа. С появлением все новых газет и журналов, уже в первой половине прошлого века начали публиковаться статьи об армянской периодике и библиографические списки органов печати. В настоящей статье рассматриваются материалы, касающиеся начала истории армянской печати. Особое внимание уделено статьям неизвестного автора в журнале «Базма-веп» (Венеция, 1847) и Ф. Чамчяна в газете «Европа» (Венеция, 1848—1851), а также статье-списку Т. Мирдатьянца, появившейся в газете «Париж» (Париж, 1863).

⁴⁰ Նույն տեղում, № 97։

⁴¹ Նույն տեղում, № 98։